# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

**24 դեկտեմբերի 2021թ.** **ք.Վանաձոր**

Ս/թ դեկտեմբերի 24-ին՝ ժամը 11:00-ին օրենքի ուժով հրավիրված նորընտիր ավագանու առաջին նիստին մասնակցելու համար ավագանու 33 անդամներից ներկայացել էին 16-ը՝ /Կ.Պառավյան, Ա.Հովհաննիսյան, Ա.Օհանյան, Գ.Բաղյան, Գ.Քալանթարյան, Վ.Դավիթավյան, Հ.Մովսիսյան, Հ.Մարգարյան, Ա.Սարգսյան, Ս.Ղամբարյան, Ա.Կարապետյան, Խ.Վարդանյան, Ա.Ափինյան, Յ.Հովսեփյան, Վ.Դոխոյան, Ժ.Հեքիմյան/:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Դ.Հակոբյանը հայտնեց, որ հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի գրությունը, համաձայն որի ներկայացվել է ՀՀ Վարչական դատարանի 24.12.2021թ. թիվ ՎԴ/13416/05/21 վարչական գործով որոշման պատճենը՝ պատասխանողներին արգելվում է համայնքի ղեկավար ընտրելու հարցի քննարկման նպատակով ավագանու նիստերի կազմակերպմանն ու անցկացմանն ուղղված որևէ գործողության կատարումը մինչև թիվ ՎԴ/13416/05/21 վարչական գործով ՀՀ Վերաքննիչ վարչական դատարան ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունելության հարցի լուծումը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ՀԱԿՈԲՅԱՆ

Արձանագրությունը կազմեց՝ Է.Հովսեփյանը